Զ.

Այս հատուածի Ա. Գլխի մէջ, ուր գերեզմանական կոթողների տեղագրութիւնը կատարեցինք, յիշեցինք Թալինի անունը, ուր բազմաթիւ մնացորդներ կան. այդ վայրը Կամսարական իշխանների նստոցն էր, նոր բառով մայրաքաղաքը: Ներանք, ըստ աւանդութեան Հայաստանում հաստատուելուց Դ. դարի սկզբում՝ Տրդատ քրիստոնեայի ժամանակ, որպէս սեպհականատէր Արշարունեաց եւ Շիրակայ գաւառների. նոքա կարեւոր դեր են կատարել Հայոց պատմութեան մէջ Մամիկոնեանների հետ եկեղեցու եւ հայրենիքի պաշտպանութեան գործում եւ անհետանում են կամ երկրորդական դառնում Ը. դարում, ծախելով իրենց կալուածները Բագրատունիներին: Բայց նրանց ծառայութիւնը աւելի փոքր չէ հայ ճարտարապետութեան եւ գրչութեան արուեստի պատմութեան մէջ, որովհետեւ նրանցն է կամ նրանց իշխանութեան մէջ այնպիսի յուշարձաններ, որպէսին Տիկորն է Ե. դարի վերջերից կամ Թալինի գոյգ եկեղեցիները, հոյակապ Մրենը է. դարում: Թալինի եկեղեցիներից փոքրը է. դարի առաջին կիսի գործ է, որի արձանագրութիւնը, թէեւ թուական չունի, բայց «Ներսէհ ապոհիպատ պատրիկ Շիրակայ եւ Արշարունեաց Տէր» մեզ յայտնի է Աւամանի եւ Մրենի արձանագրութիւններից, առաջինը Հերակլ կայսեր 27, իսկ երկրորդը 29-րդ տարին շինուած, այսինքն 637 եւ 639 թուականներին:* Երկրորդ մեծ եւ աւելի փառաւոր տաճարը շինութեան թուական չունի, բայց նա աւելի ուշ չէ, քան Ը. դարի սկիզբները, երբ դադարել էր գրեթէ, երկու դար շինարարութիւնը Հայոց մէջ՝ արաբական հարձանքների եւ պատերազմների պատճառով: Այս տաճարի յետագայ մի արձանագրութիւն գրուած է ՄԼԲ=783 թուականին:**

Պատկ. 63

Պատկ. 64

---

*Տես մեր Գրչութեան Արուեստը. Գ. §6:

**Անդ. §11: Բնագիրը տես եւ Ալիշան, Այրարատ, 138: